

ԲԱԺԱՆՈՐԻՍԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարեկակ վնասակալ	7 "
Արսասահմանի համար	15 ֆր.
վնասակալ	8 "
Աւերիկայի համար	3 ֆր.
վնասակալ	1.50 "

Երանուցման տողը սուրբին երեսին համար 40 սակրիսիսի վերջին երեսին համար 20 սակրիսիսի կ. հրեհին աւերիկանցման համար 20 0/0 զեղջ կրկայ:

Վառնայի համար ան ֆե 10 սակրիսիսի

ՉԱՐՉՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԻՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯЪ

Կամակ՝ եւ որամ զի կն խոբագրութեանս հասցիին

Редация на вѣстникъ "Шаржумъ," Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ան ֆե

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ան ֆե

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնի և ս չնն տրիսի

ՇԱՐՉՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆԻՆԸ ՊԵՏ Ե ԿԱՆԿԻՎ ՎՃԱՐԷ

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՍԿՍՎՈՒՄ ԵՆ

Բուլգար. հեռագրական գործակալութիւնը հոկտ. 21 Պուսից հեռագրում է հետեւեալ գումը— «Հոկտեմբեր 6ին երկու հազարի չափ, զորքի տղակցութեամբ, քիւրտեր խուժումէն Մուշի հովտում գտնվող Ալվարի գիւղը, կոտորում 160ի չափ հայ ընտանիքներ, տները պետրոլով հրդեհում, հրդեհված տներից գորս փախած երեխաներին բռնելով կրկին նետում կրակի մէջ»:

Յետոյ Սասունի մտերը գրանդով 6էնիկ գիւղի մօտ երկու քիւրտ իրար հետ կուելով, ներանից մէկը սպանվում է. քիւրտերը այդ սպանութիւնը նիտելով հայերի վրա, յարձա վում գն 6էնիկ գիւղի վրա, կոտորում 40ի չափ այրեր և կիներ, Վանի նահանգում էլ ընդհանուր կոտորած է սպասվում. հայերը սպասում են որ Յրանսան և Անգլիան օգնութեան հասնին»:

Թուրք կառավարութիւնը սկըսում է իր հին սովորական դարձած տաքտիքին հետեւիլ. Ձմեռը վրա հասնելուն պէս սկիւն է է գնում կոտորածների որպէս զի մինչեւ որ եւրոպան հետաքրքրվի, գիւղերը ձիւնի տակ ծածկելով կամ թաղցնելով խոշոր կոտորածների հետքերը շնջվեն:

Երեւոյթը սարսափեցուցիչ է. այս բոլորի երբ եւրոպական մեծ պետութիւնները Մակեդոնական ռէֆորմների համար հաւաքական պահանջներ են կարգում, թուրք կառավարութիւնը յանդգնում է Հայաստանում կոտորածների շարքը վերսկսել, առանց կարեւորութիւն տալու եւրոպայի սպանական դիրքին: 160 ընտանիքը, եթէ միջին թւով 6 հոգի հաշուենք մէկը, Հայաստանում ընտանիքները աւերի խոշոր թիւից են կազմված, սերունդ կրկին հազար մարդի կորուստ կայ: Իսկ եթէ այդ թւով կոտորածները շարունակվեն ձմեռվան մէջ կրկին տասնեակ հազարներ ի սարսափելի կորուստ պէտք է ցցվի մեր աչքերի առջև:

Այս կոտորածները տեղի են ունեցել 17 օր առաջ և արտասահման գեռ նոր է լմացվում. անշուշտ եւրոպական հրապարտութիւնը ժամանակին հաղորդել են այդ լուրը իրենց գեապաններին սակայն մինչեւ օրս գեապանները այդ առթիւ ոչ մի նկատողութիւն չեն արել թուրք կառավարութեան: Եւրոպական մամուլն էլ այդ գուժի մասին գեռ տեղեկութիւն չունի, ինչպէս կերելի կովկասում էլ տեղեկութիւն չեն ունեցել որ կարողանային ժամանակին հեռագրել եւրոպական թերթերին:

Իրողութիւնը այնքան սոսկալի, չարիքը այնքան սպառնական է որ մարդ գատել անգամ չէ կարողանում. եւ ինչպէս դատես. երեւոյթը կրկնվող է. նայանք ման գէպերի մասին այնքան խօսվել. դատվել, ողբաչվել է որ այլ ևս խօսք չէ գտնվում: Մի նորութիւն պէտք է լինէր, այն եթէ խորտացող յեղափոխական կազմակերպութիւնները իրենց քաջարի բանակներով օգնութեան հասնէին սպանալիքի և բիրտ իրականութեան առջև սարսած ժողովրդին. սակայն այդ բանակները գեռ երկու տարի առաջ միայն իր թի վրա գոյութիւն ունէին, իսկ այսօր նրանց հետքն անգամ չը կայ շնորհիւ ամբան ձախողվածներին»:

Եւրոպան օգնութիւն չէ հասնում. . . Հայ յեղափոխական բանակները գոյութիւն չունեն և չեն էլ ունենալու եթէ այս ընթացքը շարունակենք. հապտո՞վ է օգնելու քրտի և թուրքի օրի և եաթաղանի տակ սարսափահար հատնող, ոչնչացող ժողովրդին... Ոչ ոք. խեղճ ժողովուրդը ամեն կողմից թողնված է իր բաղդին, մեն մենակ իր թուրութեան համեմատ հսկայական ուժով թշնամու ճիրանների մէջ:

Իսկ մեր յեղափոխական կազմակերպութիւններից մին վարձկան գրիչների բերանով գոռում գոչում է—ամբողջ Հայ ժողովուրդը մեզ հետ է, մեր թիւը տասնեակ հազարների է հասնում, ամբողջ Եւրոպան մեզ հետ է, մեր զէնքերի թիւը անհամար է... Ոչ ոք մեզ չըզելի ինքնախաբէութիւն—յեղափոխական շարժատանութիւն—և երբ պէտք է վերջ գտնեն գուռ. երբէք, քանի որ յեղափոխութիւնը մեր մէջ դարձել է պարելու, գոյութիւն գարշ տալու միջոց այն տարրի համար որին մեր յիմարութիւնները շնորհիւ վիճակվել է վարել ազատագրութեան գործը... Այո, այս է դառն կացութիւնը և նա երբէք վերջ չըպէտք է ունենայ, երբէք չը պէտք է մեղմանայ անգամ, քանի մեր յեղափոխական ըմբռնումները բոլորովին խտորնակ ուղղութիւն ունեն իրական յեղափոխական գործի հանդէպ, քանի գեռ յեղափոխութեան պանծալի դրօշակը կրողները իրենց յեղափոխական պարտքը լրովին կատարած են համարում թվթեր մրտելով, տաճկաստանից գորս Ֆրանկ, տօլար, ուրիլի և կոպէկ տուղ, բայց ոչ կեանք, անդամների թիւը շատցնելու ետեւից ընկնելով և եւրոպայի այսինչ կամ այնինչ վիճակը չառէ ազգեցիկ անհատի ոտքերը լվելով: Ժողովուրդը յեղափոխված է. բայց յեղափոխված չէ յեղափոխութեան անունով յոխորտացողների ուղիւր ի նպաստ իրական յեղափոխական գործունութեան և այս դառն իրողութիւնից պէտք է տուժէ միշտ ժողովուրդը ուրիշ ոչ ոք... ՎԱՐԴՕ

ու սնոյս ճամբաները, Պօղոս-Պետրոսի սեւ պատերը եւ ժամգոտ կուռ շղթաները, քնուրի մահացուցիչ հարածները, հալածանքի ու թշուառութեան անտիպ պատկերները, որոնց մայր հայրերիքն էր մինչեւ այսօր Ռուսաստանը, Անհաւատալի են այս բոլորը նոյն իսկ բոլոր անոնց՝ որոնք զիւրահաւառ բնաւորութիւն ունին, որովհետեւ առաջինը չէ որ նման մանիֆէստներ կրտորագրուին Նիքօլա Յարին կողմէ, որովհետեւ աէրուական յուժան ստորագրումին յաջորդօրուան իսկ խայտառակութիւնները այլեւս թովմասներու փոխած են ամէն ճշմարտութեան անկեղծ անհատ, որովհետեւ, վերջապէս, ամենքն ալ սկեպտիկներ են ուսական ներկայ ոչ թիւն ներքեւ Սահմանադրական լի ու լի ազատութեան շնորհման մը նկատմամբ:

Իայց եւ այնպէս, ճշմարտութիւն մըն է այսօր, որ Նիքօլա Բ. հոկ. 17/30ին Իեթրովի մէջ ստորագրեց Սահմանադրութեան մանիֆէստը, իբրեւ անմիջական արդիւնք, ինչպէս կը. են, կոմս Վիթթիլի տաղարկին եւ բարեխօսութեան:

Հետզհետէ սոխթ ունենալք անդրադառնալու այս հարցին: Առ այժմ բաւականանալք թարգմանել հոս յիշեալ կայսերական մանիֆէստը իր ամբողջութեամբ:

ՄԱՆԻՖԵՍՏԸ

Մենք, Նիքօլա Բ., շնորհօքն Աստուծոյ կայսեր եւ ինքնակալ բոլոր Ռուսաստանի, Յար Բօլօնոյ, Մեծ Իշխան Յինլանտիայի, եւն, եւն.,

Կը յայտարարենք մեր բոլոր հաւատարիմ հպատակներուն, որ մեր մայրաքաղաքի եւ այլ բազմաթիւ տեղերու խռովութիւններն ու յուզումները կը զեղուին մեր սիրտը մեծ ու ցաւալի վշտով:

Ռուսական վեհապետի երջանկութիւնը անքակտելիօրէն կապուած է ժողովրդի երջանկութեան ու ժողովրդին վիշտը վեհապետին վիշտն է: Ներկայ յուզումներէն կարող է առաջ գալ սզգային մեծ կազմալուծում մը եւ սպանալ մեր կայսրութեան ամբողջութեան և միութեան:

Մեր կայսրին կողմէ մեր վրա դրւած գերագոյն պարտականութիւնն է յառաջ նետուիլ մեր ամբողջ խելքով եւ ոյժով փութացնելու համար դադարուժը խռովութեանց, որոնք այնքան վտանգաւոր են աէրութեան:

Սահմանելով զանազան իշխանութիւններ՝ արգիլելու համար անկարգ ցոյցեր, շափազանցութիւններ եւ

ԱԶԱՏ ՌՈՒՍԱՍԱՆ
—)o(—
Երազի մը անհատալի երեւոյթը ունին այս խօսքերը բոլոր անոնց՝ որոնք տեսած, զգացած, կրած են ուսական բոնապետական ռէժիմի արիւնալի հէքտաօմները, առեւի ժորակները, Սիպիբի սառնապատ

բռնաբարութիւններ, եւ պահպանելու մեր խաղաղ հպատակները՝ որոնք փափաքող են հանդարտ իրազորման այն պարտականութեան՝ որ կայ բոլորիս առաջ գիտեցած ենք թէ, որ պէտքի ապահովութիւն ընդանուր յայտնուելու հասարակաց կեանքի ան զորրացման անհրաժեշտ է համակարգել եւ միացնել կեդրոնական կառավարութեան սեփերը:

Կառավարութիւնը պիտի հրաժարի Տուժարի ընտրութեանց միջամտելէ ունենալով անկեղծ փափաք մը զեկտ. 24, 1904 Ուրաղի իրականացման համար: Նա պէտք է անվերապահ Տուժարի բնագիծը եւ իր աշխատութեանց վստահութիւնը, ու չը դիմողներ որոշմանց եթէ ատեն չեն հակասել Ռուսաստանի պատմական մեծութեան: Նա պէտք է նոյնաորէ ինքզինքը հասարակութեան մեծամասնութեան կարծիքներուն եւ ոչ թէ արձագանք ըլլայ ազմկարար խմբակներու եւ միշտ յարափոփոխ հատուածներուն: Մասնաւորապէս, էական է ապահովել կայսերական խորհրդի ղեկավար ընտրական սկզբունքի վրայ, կը հաւատամ թէ՛ գործնական իշխանութեան յէջ հետեւեալ սկզբունքները պէտք է մարտնչան:

1. Ուղղամտութիւն եւ անկեղծութիւն քաղաքական (սիվիլ) ազատութեան հաստատման եւ ատոր պահպանման երաշխաւորութիւն:
2. Միտում բացառիկ օրինաց վերացման:
3. Համերաշխութիւն կայսրութեան բոլոր մարմիններու գործունէութեան:
4. Վերացում բռնական միջոցներու այն վարժունքներու նկատմամբ որ բացարձակօրէն չեն սպառնար հասարակութեան կամ տէրութեան:
5. Դիմադրութիւն այն արարքներուն որ բացառապէս կը սպառնան հասարակութեան կամ տէրութեան:

ՍԷՍԻԼԻԱ Մ. ՊԼԷՅԲԳ

Դ Ե Ֆ Ի

Հայկական Ռուսիան մը (Թարգմանութիւն Անգլերէնէ)

ԳԼ ԺԴ.

ԿԵՆՏՐՈՆԻ ԿԸ ՓՇՐՈՒՄ

«Որքան յօժարովի կուզէի սիրելիս թեւերուս մէջ սեղմել, Ափսո՛ս, ձեռքերս չզիտակապուած էին... նստած էի հին, այդ թշուառականներուն նշանակին ու ծաղրանքը դարձած մօրգ գողգողուն մարմինը քովս նիզակահարուած. սակայն, նահատակներու յատուկ մտային յափշտակութեամբ մը, երբ բոցերը կատաղօրէն կը բորբոքէին անոնց շուրճը, հողի սրբազան հրճուանքով մը լեցունեցաւ, էն այդ գիւհահարներու զարելի անպատու մէջ խուսափած էր: Էնոր փախուստով ստացած յաղթութիւնն ձայնս վերստացուց: «Տիրոջը նոր երգ պիտի երգեմ, որով հետեւ ան այցելեց իր ժողովրդին ու փրկեց զայն»: Զատամածին լսեցէք», գոչեցին ճիւղերը «Ան լսեց ինձ, ու իմ բոլոր տառապանքներէս փրկեց զիս, ո՛հ, Յիսուսա՛ն: Կրկին այդ»

թեան, հիմնուած ըլլալով այսպիսի գիմագրութիւն մը օրէնքի եւ բանիմաց հասարակութեան մեծամասնութեան բարոյական միացման վրայ: Վստահութիւն պէտք է տրուի ուս հասարակութեան քաղաքական թաքտին: Անհնար է որ հասարակութիւնը բաղձայ անիշխան վիճակի մը, որ կը սպառնայ, ներքին գործադուլի սարսափներուն հետ միասին, կայսրութեան անդամատման:

Ուրեմն կը սահմանենք կառավարութիւնը յառաջ վարելու մեր անդառնալի կամքը հետեւեալ կերպով.

1. Ենթահիշ ժողովրդին քաղաքացիական ազատութեան անփոփոխ հիմքեր, անհատի իսկական անբռնաբարելիութեան վրայ հաստատուած եւ ազատութիւն խղճի, խօսքի, միութեան եւ ընկերութեան:
 2. Առանց յապաղելու արդէն կարգուած Տուժարի ընտրութիւնները, մասնակցութեան հրաւիրել. հնար եղածին չափ, նկատի ունենալով իր գումարման կարճ ժամանակամիջոցը, բոլոր այն զսակարգերը որ այժմ զրկուած են ընտրական իրաւունքներէ, ընդհանուր ընտրական իրաւունց սկզբունքի վերջնական բարեփոխումը թողով իրերու նորահաս տաս օրինական կարգին:
 3. Հաստատել մէկ այնպիսի անփոփոխ կանոն՝ որ ոչ մէկ օրէնք կարողանայ յառաջ գալ առանց տէրութեան Տուժարի հաւանութեան եւ որ հնար ըլլայ ընտրեալ անձին ստանձնել իսկական մասնակցութիւն՝ մեր կողմէ կարգուած իշխանութեանց գործերու օրինաւորութեան վերահսկումը:
- Կոչ կընենք Ռուսաստանի բոլոր հաւատարմ ուղիներուն յիշել իրենց պարտականութիւնը զէպի հայրենիքը եւ սատարել այս անուր խռովութեանց վերացման եւ համագործակցել իրենց ոյժերը մեր ազգային հոշին վրայ անշորութեան և խաղաղութեան վերահաստատման:

Պր. Սեւակ Ի Բեթերով 27/30 հոկտ. 1905, մեր թագաւորութեան տասն և մէկ երորդ տարին: (Ստորագրուած) ՆԻՔՕԼԱ

Ահա այս է մանիֆէստը, որ բովանդակ կայսրութեան մը անդորութիւն, խաղաղութիւն և բարօրութիւն կը խոստանայ, թէ ո՞ր ատիճան պիտի գործադրուի ատոր փոխարինութիւնը, ատի ժամանակի հարց է:

Սա միայն յայտնի է որ ժողովուրդը ընդունած է զայն չափազանց ոգեւորութիւնով եւ բարձրագոյն ուսանելով եւ կարմիր ու սեւ զրօշակներով, Սարիս կենաց կէցցեներ մէջ կողմէ կը լսուին: Կը սարքուին ցոյցեր, թափօրներ կը շրջին հայրենասիրական եւ յեղափոխական երգեր կերպուին: Ծնուածութիւնը ընդհանուր է, կը յուսանք թէ չը պիտի փոխուի յուսախարութեան ինչպէս եղաւ անցեալ դեկտ. 24ի ու քաղէն վերջ:

Առաջին միջիտը ընտրուած է կոմս Վիթթէ, հրաժարած են Իրէքով, մարդկային հրէշաւորութեան եւ պատմութեան մարմնացումը, Բօպիտո շօսեցի, պիղծ Սիւստի սայայէլա. Կիպ քրօքտորը, Վլատիմիր Եւն. Եւն.:

Պայտօնէ վար են տոնուած նախկին ֆինանսական, ներքին գործոց ճանապարհներու եւ հաղորդակցութեան եւ այլ միջիտները եւ անոնց փոխարէն Վիթթէ ընտրած է իրեն համար նոր Գապիլէթ:

Ս.յս բոլորը յուսատու արշալոյսներ կը խոստանան: Տարա վերջապէս ազատականութիւնը իր յաղթանակը իցի՛ւ թէ նոր պայքար մը ալ չըսկսէր յետադիմականներու կողմէ:

Մ. ՅԱԼԼԱԿ

ան ունց մէկ օրը մը իր յամառութիւնը կը մեղմացնէ: Այդ ուղիները ստանալու ենք: «Շուտ, շուտ, աքծանները» — բայց շատ ուշ էր: Իրենց հրէշաւոր արարքներով խելա յեղուած, չէին նկատած որ կրակի տրուած տունը ծուխով լեցուած էր, ու հազիւ աքծանները պատրաստած իմ արիւթ թիւնս փորձելու վրայ էին, երբ մեծազոր դարձաւ ինձով մը տանիքին մէջ մասր ներս ինկաւ ու խոշոր բոց մը գէպի ոյր սրբաւ... Գիթրանքի և սարսափի բարձրագոյն վայրահաշիւններով մարդասպաններու երկնոտ խմբակը դուրս խուժել սկսաւ՝ իրար հրմտկելով՝ իւրաքանչիւրը իր անպէտ կեանքը փրկելու փութկոտութիւնով:

«Կապուած մնացի ես հոն ծուխին խեղդամահ ըլլալու համար, ի էպէտեւ հարստահարիչներու աւելի քաղցր մահ մը ծրարած էին ինձ համար: Իայց հիմա ա՛լ մեռած էի: Հոգիս տակաւին յայտնական հոգեզայտութիւնով մը պարտուած էր որ՝ կիսնս — Շուշանիկս — Տօրօնի վարդա՛ թուրք յափշտակիչներու անպատու մէջ խուսափած էր: Էն հիմա իր սիրելիներուն հետն էր, հո՛ն, ուր ես ալ չուտով պիտի երթայի...»

«Այսուամենայնիւ, նոյն իսկ հիմա, հոգեմայ տենչ մը ունէի... Ո՛հ, միայն թէ, գէթ բոպէի մը համար, կարենայի գրկել ոտքերուս ներքեւ»

ՅԵՂԱՓՈՒՈՒԿԱՆՆԵՐԸ ՑԱՐԻՆ ՄԱՆԻՖԷՍՏԷՆ ՅԵՏՈՅ

«Ն. Յր. Բրէսս» հետեւեալը կը հաղորդէ. ընկերավարական յեղափոխականները, որոնք գոհ են Սարին մանիֆէստէն. յայտարարեցին որ պայքարը պիտի շարունակուի: Անոնք վիթխարի թափօրներ կազմակերպեցին Բեթերսպուրկի փողոցներուն մէջ հասան միջնաբերդի և պատուհաններու միջոցաւ բանտարկեալներուն յայտարարեցին որ շուտով պիտի ազատ արձակուին: Ան կը նմանէր Բարիկի Բաստիլո գրաւումին: Կառավարութիւնը ցուցարարներուն գէմ ոչ մէկ միջոց ձեռք չառաւ միջնաբերդ անգամ այն ատեն երբ ցուցարարներուն մէջ նկատուեցան զինուորներ և նաւազներ: Իրերօվին այդ վարժունքը կապացուցէ որ ան զրսպուեցաւ բարձրագոյն հրամանով արժարին չը արգիլելու, որ և կը նշանակէ թէ Ռուսիոյ մէջ նոր ժամանակաշրջան կսկսի: Այդ թափօրները կը գիտուին իբրեւ յեղափոխութեան վերջին նշոյլներ:

«Պարլ. Պօրտէն քուր, Գի Բեթերսպուրկէն կը հաղորդեն — խաղաղութիւնը հետզհետէ կը վերահաստատուի Ստուարթի աճրթի մը կանգնած է բանտին գիմացը բայց խաղաղ կերպով: Փողոցներու մէջ հոս հոն կը լսուին բացառանչոյթիւններ — «Կեցցէ՛ ազատութիւնը», «Զերբա կալուածները դեռ բանտն են, ժէնէրալ Խրէքով խիտա միջոց»:

Փոռուող սիրուն մարմինը — իր արիւնով կիտաւորուած և իր սպանուած մանկիկներուն արիւնով ներկուած ճերմակ հանդերձները, Ո՛հ, միայն թէ... Սակայն այս շարտայայտուած սենչս յանկարծ կանգ առաւ: Մանր ձեռք մը թեւերուս վրայ գրուած էր: «Ձիս կաշկանդող պարանները քակուած էին, ինտացած ծուխին մէջէն ձայն մը գոչեց — «Ելի՛ր, բարեկամ, ու թաղէ՛ մեռելը»: Գիւլխածածեցի: «Ե՛մ մեռելս հոս է, ըսի, ու իմ մոխիրներս անոնց հետ պիտի խառնուին»: Թեւէս բռնելով ստիպեց զիս ոտքի ելլել — «Որի մը, զաւակ մը չունի՛ս անոր համար ապրելու: Շուտ, ժամանակ չկայ կորսնցնելու»: Իրաւ թէ չկար: Խոսած պահուն բոցավառ գերան մը ոտքերուն մօտ ինկաւ և օյր վառուած փայտի ծխով և բոցով լեցուց: Ուրի ցատկեցի, Ու այս մարդը, այս օտարականը, — իմ կեանքիս համար իրենը կը վտանգէր: Ո՛վ էր ան: Մոռնալով անցեալը, օձիքէն բռնելով խելայեղօրէն զինքը գէպի պահին փոքրիկ դուռը քաշեցի, ուրկէ սովոր էինք պարտէզ ելլել, ինձմէ առաջ զայն դուրս հրելով: Պաղ զեփիւր բորբոքած ճակատուս փչեց ու քանի մը բոպէ մնացինք այս պտուղի ման մէջ: Ապա բարեկամական սեղմումով մը մեր ձեռքերը իրար մօտեցան — եղբայրութեան այն սեղմումը, որ օր մը բոլոր ազգերը իրար

ներ ձեռք առած է խաղաղութիւնը խանգարողներու դէմ:

Տի Յայթի կը հաղորդեն Ռեթերսպուրկէն.— Մանիֆէստին ելած օրը գիշերը վիժխարի ցոյց մը կազմակերպեցին փողոցներուն մէջ. կարմիր դրօշակով և «Մարտէլէյը» երգելով անցան Ալէքսանդրեան պարտքը, Անիչքով կամուրջը և դատարանի հանդէպ, բանտին տուփեւ երգեցին յիպոփոխական երգեր Ասկէ մեկնեցան դէպի Նեփօքի Բրօսբէքթ. Պօպէ-նօնօսցի տանը առջեւ սուլեցին, ճառարտու մը յիպոփոխական ճառ մը արտասանելով, կասկած յայտնեց Մանիֆէստին մէջ յայտարարուած բարենորոգումներու կատարման մասին: Ամբոխի առջեւէն կարմիր դրօշակ մը բռնած ուսանող մը կը քալէր: Բազմաբնոտից ճեմարանին քովը ուսմը մը պայթեցաւ: Տուները զարդարուած են դրօշակներով. քաղաքին բոլոր օրահներուն մէջ տեղի կուենան քաղաքական ժողովներ. կազանեան մայր եկեղեցիին հրապարակին վրայ ստուարաթիւ միթինկ մը տեղի ունեցաւ. քանի մը մարդիկ ճառ խօսեցան, ի թիւս որոց և Սպա մը: Ատկէ մեկնեցան դէպի համալսարան. ողջունուելով պատշգամբներէն և ժողովրդէն թաշկինակներու ծածանումներով Համալսարանէն մեկնեցան դէպի բանտ ուժով բանտարկեալները ազատելու համար: Ոչ զինուորները և ոչ ալ ոստիկանութիւնը միջամտեց. ամբոխը կը կրէր կարմիր դրօշակներ:

Հակներս որոնց ոտտիկան պահակներ յարգանքի ողջոյն կուտային:

ՃԱԲՈՆԱԿԱՆ ՀԱՇՏՈՒԹԵՒՆ ԵՆ ՅՏՈՅ

Հայտութեան պատճառով ձարոնի մէջ տեղի ունեցած խռովութիւնները եւ զժգոնութիւնները, ըստ երևոյթի բոլորովին վերջացած են եւ խելացի եւ ուշիմ ժողովուրդը սկսած է իր յաջողութիւնը տօնել խաղաղ, ոգեւորիչ հանդէսներով:

Անցնալները քաջարի թօգօն իր զբաղմունքներով վերադարձաւ թօքթօ որուն պատճառաւ անդի ունեցաւ հսկայական նաւահանդէսը Միքատայի ներկայութեամբ: Այդ պաշտօնական եւ յաղթական հանդէսէն յետոյ նորբը սկսած են. ահա այդ մասին ինչ կը հեռագրէ «Թայմզ» հոկտ. 11ին թօքթօյի թղթակիցը.— «Յայտարարուած որ Ռուսիոյ մէջ 1878 ճարտարի գերիններ կան, ի թիւս որոց և ոչ զինուորներ, մինչդեռ հայտութեան անշ Ռուսիոյ զրկած ցանկերը 976 կը ցուցնէին: Այսօր թօքթօյի Ալօյաձեան գերեզմանոցին մէջ կրօնական սեօ հանդէս մը կատարուեցաւ, պատերազմի միջոցին սպանուած ծովային սպաներու եւ զինուորներու յիշատակին, Ամիրալ թօգօն, բոլոր ամիրալները, իշխանազուները եւ բոլոր բարձրագոյն պետական մարդիկ իրենց ներկայութեամբ աչքի կը զարնէին:

Այսօր Բարոն Նակագաքին իր դրօշակին պարբեր մէջ դաշտային հանդէս մը սարքեց 5000 ծովային սպաներու համար. Սպաները եւ զինուորները ազատօրէն իրար խառնուած էին. ներկայ եղող բոլոր անգլիացիներուն սիրալիր ընդունելութիւն եղաւ: Ու նոյ. Չին ալ նոյնանման հանդէս մը պիտի սարքէ նոյնչափ բազմութեան համար:

Թօքթօյ քաղաքը եւս 20000 ծովային սպաներու եւ զինուորներու համար

հանդէս մը պիտի սարքէ:

Վերադարձող զինուորները երեկ ըսկասան ձաբոնիա հասնիլ. կը հաւատաց չի որ ամէնքն ալ վեց ամսուան ընթացքի մէջ վերադառնան:

Ռուս թօքթիւնաւ «Բօստանիկ»ը վերանորոգուած եւ Բօրթ Յիթուրին քովը ջուրը թողուած է:

Հիւսիսային Սախարին յանձնուած տեղի ունեցաւ հոկտեմբեր 3ին օրուան մը յետաձգուով, որուն պատճառն էր Ալէքսանտրովսկի մէջ տեղի ունեցած սեծ չրդե՛ մը որ, հակառակ ճարտարներու եւ ռուսներու միացած ջանքերուն մարտիւ համար, 30 մեծ շիրուքի ներայրեց. Ռուսները ստորագրեցին արձանագրութիւն մը որով կը հաւանի՝ ճարտարացոյ առաջները ձեռք առած միջոցները եւ խոստանալով պահպանել ճարտար զինուորներու գերեզմանները:

Կ Ո Տ Ո Ր Ա Ծ Ը
Ե Ւ
ՅԵՂԱՓՈԽ. ԽՍԲԱԳԻՐԸ

Ամերիկեան հրաշալիքներով լի մեծ քաղաքներէ մէկու մխոյր, վիթխարի պատուհաններով բաւական սիրուն կերպով կահուարուած սենեակի մէջ, բաւական սուղ և գրող մարդի անհրաժեշտ ու մի քիչ էլ փարթամ գործիքներով զարդարուած բիւրօյի առջեւ նստել է մի հայ յեղափոխական խմբագիր... չը մոռանանք պարզել որ սենեակի վարձը, կահ կարասիները, բիւրօն իր բոլոր զարդարանքներով ու գործիքներով նոյն լակ խմբագրի ստատոքսի մէջ գտնված կերակուրը գնված են ամերիկեան գործարաններում տանջվող հայ գործաւորների աշխատանքի արդիւնքով, որոց թիւքը յայնու անջվող արեւնա

կիցներին փրկելու է խոստացել յաւիտենական պարագիտ խմբագիրը:

Գլուխը կախած նա ետանդով գորուծ է հետեւեալ տողերը...

«Մեր անգնադորդ կուսակցութեան հազարաւոր զինուորները վերջին ամիսներում հրաշքեր գործեցին: Ամբողջ աշխարհը հիացաւ մեր կուսակցութեան ուշիմութեան, փորձառութեան և ապստամբական պատրաստութեան վրա... այդ չէր բաւեր մենք զիւրանալով խաղաղ անհաղին յաղթութիւն տարինք դաշինք կոնկրետ Անգլիայի, Ամերիկայի և Յիւրանայի հետ... Հայաստանի արեւը ծագելու վրայ է... կենսաբեր զարնան առջեւ կը գտնուի Հայաստանը: Թուրքերը քորդերը սարսափած են մեզմէ... այլեւս չեն համարձակեր հայու մը զպաշտել... և այդ ամենը ստակով կրկայ... տօլար աւէք»:

Այս տողի վրայ յանկարծ խմբագրի միտքն է ընկնում նշանաւոր հանգուցեալ մի յեղափոխականի օտարացեղ կնոջ բնորոշիչ խօսքերը. «Հայ յեղափոխութիւնը դրական արդիւնք չը պէտք է ունենայ, բայց հայ յեղափոխականները ապրելու համար պէտք է շարունակեն իրենց գործունէութիւնը»:

Այս հայ յեղափոխականի և նրա գործունէութեանը վրա սուեր նետող խօսքերը, որոնք բոլորովին իրաւացի են արկնող շրջապատողների համար, մի վայրկեան դողացրին հայրենասէր խմբագրի գրիչը, ու տօլար խօսքը մի քիչ լաւ չը գրվեց:

Սակայն ձեռքի այդ դողացումը միայն մի ակնթարթ տևեց. խմբագիրը կրկին նոր եռանդ զգենալով շարունակեց իր տողերի շարքը. յանկարծ փոստի ցրվիչը ներս մտաւ բերելով մի անգլիերէն թերթ. Տիար խմբագիրը անմիջապէս թերթը վերցնելով սկսեց հեռագրիւրերը կարդալ. Առաջին հեռագրիւրը գուժում էր Ալվարիթի և Շինիկի նոր կոտորածը. — Ո՛հ, նորէն կոտորած, մենք

պիտի կասէ: Երբ կը հեռանայինք, աչքերուս անխօս հարցման պատասխանեց.— Ես թուրք մըն եմ. ըսաւ ան, բայց և նոյնպէս. մա՛րդ մըն ա՛լ եմ...»

«Կստոււծոյ ճանապարհները զարմանալի են... Այս մարդը—այս թուրքը—որ ազատեց Արամբանը՝ իր Կիֆիին համար—Գաֆէնտի պէկն է—Սիւլլամանից հայրը...»

Ծաւի ու ողբելիցութեան այս նամակը արցունքով թրջուած էր, իւրաքանչիւր կիւն վրայ, անձրեւի չըման հոսած կիւն անոնք կարդացած պահուս: «Ո՛հ, հայրս, խեղճ հայրս... կը խորհէի Ո՛հ հայրս, խեղճ հայրս... Ո՛հ, հիմա կը հասկնամ...» գոչեցի բարձրաձայն: Ապա արցունքի ամպերուն մէջէն երեցաւ ծիածանը... Ու խոստացեալ ծիածանին մշտապէս բերող խրատիչ հրճուանքով խոնարհեցուցի գլուխս:—«Ո՛հ Աստուած, շնորհակալ եմ քու զթոթեանդ ու բարեբեներդ համար... որ հօրս կեանքը փրկոց եղաւ... Սիւլլամանիս հօրը միջոցով...»

ԳԼ. ԺԵ.

«Ո՛Ղ. ԱՍՏՈՒՄ ԱՊՐԻՄ...»

Ճիշդ ամիս մը անցած էր ա՛ն ուրէն, երբ հայրս ձեռքս զրաւ մահու գործիքները, սակայն անոնց լոկ գաւ

ղափարն իսկ կը զայրացնէր հողիս, որ՝ նորաթի աշխոյժով մը լիցուած, սիրոյ հրճուանքով կը բարտէր անսխալ իրտակից թէ անգիտակից, օրուան ամէն ժամուն, զիշերուան ամեն ժամուն.—որովհետեւ հիմա հանգիստ կը ննջէի—ալօքս կը բարձրանար դէպի վեր—«Ո՛հ, Աստուած, ապրի՛մ...» Իրեցազնուհի մը շէի. կը սարստայի մահուան սառեւերէն, ինչ որ բնական է սսն մատղաշ վառ հոգիներու:

Օրերը զանցադրէն կանցնէին Միօրինակ գիշերը կը հառաչէի.— Երանի՛ր թէ ցորեկ ըլլար՝, Տորի՛ր կողբայ—«Իրե՛ւ թէ գիշեր ըլլար» Ու այսպէս ուրիշ ամիս մ՛ալ անցաւ. հայրս՝ ակնկառոյց իր այնքան տենչացած մահու նշանին սպասելով.—ես, կաթոգին, յուսալից՝ փախուստի ճամբայ մը փնտոյնով՝ երբ մահը մօտենար, որու մասին հայրս միշտ կը վստահեցնէր զիս:

Հիմա յուսոյ նշոյլներ պլպլացին վհատած ուղեգիր վրայ Արգեօք մշտապէս աղօթքներու պատասխաններն էին ատոնք:

Անորեայ գործս ըրի մեր աւերակ պալատին ամէն մէկ խորշը, ամէն մէկ անկիւնը քննել Այն կրակէն ի վեր, որոնք մօրս և եղբայրներուս մորմինները ածիւններու վերածեցին, տանը շատ մը կողմերը՝ ինքնին թողուած ըլլալով քայքայուելու՝ մեծ մասամբ անապահով էին և ես խստիւ

արցնուած էի ատոնց մօտ երթալ: Իայց հիմա... հիմա... կեանքի ու մահու շօտին մէջ, ո՛չ մէկ վտանգ պիտի արգիլէին իմ անձիտ քալերս հո՛ն զիմէն Հետաքօսեցի արահետը—այժմ անյարկ—լի նախկին շքեղութեան բեկորներով: Մէկ գերանէն միւսը կը ցատկէի, աւերակ խորշ մը գտնելու համար, կամ, գուրսը, բացօթեայ տարածութիւնը կահնաշափէի, հակառակ պարագային եթէ հարկ ըլլար փախելի՛ սիւիել կեանքս փրկելու համար: Սակայն այս երկու կողմէն ալ փախուստի յոյս չկար: Երկրիւր տափարակ էր ու լեռները հասնելէ առաջ մինչեւ երկու մղոն տարածութիւն պարզօրէն կարելի էր շնչարուել. անձեղուն գերաններէն զէպի վար բարձրութիւնը բաւական շատ էր և ատոնցմէ ցատկել կը նշանակէր՝ խուսափիլ ու զած մահը ընդ գրկել: Ափսո՛ս, ափսո՛ս... բայց հառաչ մը հանելով, անփոփոխ աղօթքս աւելի շեւթ, աւելի յուսալիք քան երբէք շարձարցաւ կրկին.—«Ո՛հ, Աստուած ապրի՛մ թո՛ղ ապրի՛մ...»

Խուզարկութիւնս—շարթներէ ի վեր շտրուակուող տաճանելի խուզարկութեանս վերջին օրն էր այս—աւարտեցաւ. Սիրտս յուսահատ զգացուով մը լեցուած՝ պատրաստուեցայ ներս երթալ: Այս աւերակ սենեակը վերջին յոյսս էր թէ ինչու, չեմ կրնար ըսել: Ինչպէս ըսի, կը

(Շարունակելի)

Թղթի վրայ նկարագրելն յոգնեցանք. թուրքերը կոտորելն չը յոգնեցան. ան ալ ասանկ գէշ ժամանակին. սոյաբնեբու ուտելու ժամանակ . բայց ոչինչ սա լուրը կարելի է շահագործել. սոյաբնեբուն թիւը աւելի շատցնելու համար կը գրենք այսպէս. — Ալվարիճի և Շէնիկի մէջ ընդհարում տեղի ունեցաւ քիւրտերու և հայերու միջև. Հայերը մօտ հազար էոգի կորուստ ունին. բայց մեր քաջարի հրոսախմբերը վրա հասնելով թուրք զինուորներուն և քիւրտերուն աւելի խոշոր կորուստ պատճառելով թշնամին ետ մղեցին. տեսէք որչափ ազէկ բան է հրոսախմբերու գոյութիւնը և զաւոնք լաւ զինելը ու այդ գործը կընէ միայն մեր կազմակերպութիւնը, միակը վստահելին և զուտ յեղափոխականը. ևս կապացուցէ որ հրոսախմբերը անհրաժեշտ են — ուրեմն ստակ սոյաբ աւելք որչափ շատ այնքան լաւ».

Յօդուածը գրվեց, միւս օրը լոյս ածուաւ. ուրիշ թերթեր գրել էին իրական հոսագիրը իր մերկութեամբ...

Երորդ օրը յարձակումը սկսվեց լուրը յեղաշրջոյ խմբագրի գէշմ. ու նա էլ ամենայն պաղարիւնութեամբ պատասխանեց. քննադատներին .

— Այդ հեռագիրը սխալ է. մենք կը զեկավարուինք մեր պաշտօնական տեղեկութիւններով, մեր ուսական սահմանադրի ընկեր թղթակիցը հեռագրած է մեր գրածին պէս և և ճիշտը ան է(III) .

Ի ՆՊԱՍՏ ԴՊՐԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Երկու շաբթի օրը վառնայի դպրոցներուն հոգաբարձութիւնը պարտաօրուեցաւ հրաժարիլ իր դպրոցներուն ի նպաստ տալիք է երկայացումը որոշումէն, որովհետեւ դժուարութիւններու հանդիպած էր օտարներու մէջ տոմարակ ծախսող յանձնախումբ մը կազմելու համար .

Չարմանալի բան օտար վաճառական շրջանակի մէջ զիրք ունեցող հայեր պանազան պատճառաբանութիւններով չեն կրցած իրենց տրամադրելի ժամերէն մէկ երկուսը գոհիլ, ազգային դպրոցներուն օգնութեան հասնելուն համար .

Օտարները իրենց ազգային հաստատութիւններուն օգնելու համար շարունակ տոմսակներ կը ցրուեն հայերուն — ու մեր վաճառականները կը նեղուին նոյնը ընել գործերու շատութեան և ժամանակի անյարմարութեան պատճառաբանութիւններով .

Ու կը զարմանանք թէ մեր ազգային հիմնարկութիւնները չեն յառաջադիմէր ի՞նչպէս յառաջադիմեն երբ մենք անոնց ստատրելու գործին մէջ շատ անտարբեր ենք և աւելի կը հետաքրքրուինք շինական հաստատութիւններով. քան թէ մերիններովը .

Պ. Գալֆայեան այժմ ստիպուած է նոյն իսկ Հոգաբարձութեան խնդրանք այդ ներկայա-

ցումը կրկին միայն ի նպաստ իր անձին ներկայացնել. Երեսնամբ որ վառնայի հայ հասարակութիւնը պիտի չը զլուսնայ իր պարտականութիւնը կատարելի գէպի տալանդաւոր դերասանը .

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Մ Ի Ա

Պ. հեռագր. գործ. կը հազորդէ — Մուշի հովիտի մէջ Ու վարինճ գիւղի բնակիչները 160 տուն կոտորուեր են քուրդերու կողմէ և թուրք զօրքերու աջակցութեամբ. գիւղը հրդեհուած է և աւերակի վերածուած .

— Սասնոյ Շէնիկ գիւղի վրայ քիւրտերը յարձակում գործեր և 40 հոգի այր և կին են սպաններ ու հեռանալով սպառնացեր են գիւղը աւերակի վերածել . Պօլ սոյ հայերը այս լուրերուն վրայ մեծ վախի մէջ են. կը կարծեն որ Երևոյի փորձին արգիւնքներն են այս բոլորը և Պօլսոյ մէջ ալ կոտորած պիտի տեղի ունենայ. Անգլիայէ և Ֆրանսայէ միջամտութիւն կապան. վաճայ նահանգում ևս կոտորածը վախկայ. առհասարակ ցըղհանուր համոզումը ան է որ նոր մեծ ջարդեր պիտի տեղի ունենան .

— Պարանկ. Սայթունկ* թերթը կը հազորդէ որ հակառակ թուրք կառավարութեան մերժման, Սէլաւիք հասած Եւրոպացի քոնթրօլները կաշխատին և արգէն ընդհանուր համաձայնութեան սկսած են թէ ինչպէս պէտք է տանիլ Մակեդոնական ելևմուտքին գործը .

— Պօլսէն հոկտ. 23ին կը հեռագրեն Պէշէրնա Իօշթա* թերթին հետեւեալը. — Նէճիպ Սէլհամէն կը շարունակէ ճիգեր թափել գտնելու Երևոյի մահափորձին հեղինակներուն հայ գործակիցները. ան կը պնդէ որ զաւարտութեան բոլոր հետքերը գտեր է. Սակայն քննութեան յանձնախումբը որ նիւտեր կուներնար պալատին մէջ Մէլհամէին նախագահութեամբ նիւտերը դադրեցուցած է. Մէլհամէ կը պնդէ որ այդ յանձնախումբը շարունակէ իր գոյութիւնը և անոր օգտակարութիւնը ապացուցանելու համար ան կը շարունակէ իր խուզարկութիւնները ուրոնց արգիւնքն է բազմաթիւ հայերու ձերբակալումը, որոց մեղքը միայն հայ ըլլալին է. Պալատի գաղտնի ոստիկանութեան պետ Թագսիմ փաշա ալէկ յարաբերութեանց մէջ չէ Մէլհամէին հետ և գտած ու յաջողած է հաստատել որ Մէլհամէն 96 թւականէն մնացած և Թօրխանէի մէջ Պահուած պոմպաներն իր մարդոց ձեռքով այս ու այնտեղ դնելով

իրը թէ նոր բուժաներ կը գտնայ. Թագսիմ փաշային այս գիւտին պատճառով Մէլհամէին գիրքը խախտուած է .

Թ Ո Ւ Մ Ի Ա

Հոկտեմբեր 23ին Իեթերսպուրկէն հետեւեալը կը հեռագրեն — Ռուս Տամուլը հետեւեալ կերպով կը խօսի վերջին անցքերու մասին .

«Սօվոտ» թերթը կըսէ. — կը կարծենք որս պատմութեան ոչ միայն էն կարեւոր վայրկեանը այլև ամեն դժուարին և վտանգաւոր .

Այսօրուան նշանաբանն է ծանր և տխուր անցեալը պատմութեան դիւանին յանձնելէն յետոյ — խաղաղութիւն, ազատ աշխատանք և վերածնում. Յառաջադիմական ծրագիրը իրականացնելու գործին հետ մէկ տեղ պէտք է պահպանել և օրինական կարգը .

— Պիլթ. վէտէմօտա* կը յայտարարէ — Մանիֆէստը պիտի ապահովուի ժամանակաւոր կանոններով մինչև որ պետական ծուծան հաւաքուի. Ոչ մէկ օրէնք չը պէտք է հրատարակուի մենք կոչ կընենք կառավարութեան որ հաւատարիմ մնայ հոկտեմբեր 17ի յանձնառումներուն . «Սօվէտը» կըսէ. — Ռուս ժողովուրդը իր ազատի ընտրով ներկայացուցիչներուն միջոցով պիտի սկսի կառավարել պետութիւնը. Այս ամեն տեսակ ազատութիւնները որոնց մասին կը խօսուէր և կը գրուէր վերջին տարիներս. որս քաղաքացին ունի արգէն, մենք կը հաւատանք որ ապէ վերջ Ռուսիոյ համար լաւ ապագան կսկսի .

«Սօվոյէ վրէմիա» — Ռուսիոյ բազը որոշուեցաւ. ապէ վերջ ան ազատ սահմանադրական երկրէ. Ամենէն հանդիսաւորը պիտի ըլլայ այն օրը ելը մենք ընտանեբար պիտի հաւաքուինք ներքին կարգը վերահաստատելու համար .

— Հոկտեմբեր 23ին Իեթերսպուրկէն կը հեռագրեն. — Բանտային վարչութիւնը այս առաւօտ կանուխ սկսաւ ներուած բանտարկեալները ազատ արձակել. որպէսզի ուշադրութիւն չի գրաւէ և ցոյցի առիթ չը տայ. 40 ազատուածներէն շատերը հնար գտած են իրարու հանգի պելու և որոշած են այս երեկոյ Մանկավարժական Մուղէի որսահին մէջ միթիւկ սարքել. Առաւօտեան մեծ ցոյցեր կապասուի վերջին դէպքերու զոհերուն թաղման առթիւ. ընդհանուր նահանգապետը այդ առիթը արգէն յայտարարութիւն մը տուած է .

ՉԻՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄ

Ամերիկեան ամերալ Թրեն, և իր որդին զնդանութեան Գիրոս նաւին հրամանատարը գացեր են Նիւ Երկնի մօտերը ֆազան որսալու. Ամերալը պատահամբ չինուհի մը կը վերաւորէ. անմիջապէս վրայ կը թափին գիւղացիները կը շրջապատեն սպաները. գետին կը թաւալացնեն ամերալը կը խլեն հրացանները և անոր որդին իբրեւ պատանդ կը վերցնեն. Ամերիկացի բժիշկ մը կը յայտարարէ որ չինուհուն վէրքը վտանգաւոր բայց չէ և կմերժեն աչատ թողուլ ամերալի որդին. Վերջը 40 նաւապետ կը զրկուին գերիներուն օգնելու համար սակայն գիւղացիները անոնց վրայ ալ կը յարձակին. Չին պաշտօնեաները կը հրաժարին վերադարձնել Ամերիկացի սպաններուն հրացանները .

Ինչպէս կը հազորդեն Վաշինկթոնէն, պետական անձերը շատ լուրջ խնդիր կը համարեն այս խնդրը. ներքին գործոց և ծովային նախարարները խորհրդակցութիւն ունեցեր են. Ամերալ Թրենին պատահած գէպը կը նայ լուրջ հետեւանքներ ունենալ. Պրաի պահանջուի քաբիթան Թրենի ազատումը. և եթէ չին կառավարութիւնը չը համաձայնի ուժ պէտք է դիմեն. Չինաստանի գեսպանը վաշինկթոնի մէջ, դեռ ու է տեղեկութիւն մը առած չէ այդ դէպքին մասին. Ամերիկեան զբաւաւոր մը նաւերնը նաւահանգստին մէջ գտնուիլը կարելիութիւն կուտայ կառավարութեան գործելու գերի սպան ազատելու համար .

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սօվիայի երկրագործական պանքայն գրամներ առած և արտասահման փախած ու Բարիլի մէջ ձերբակալուած կերօֆ մօտ ժամանակներս Սօֆիա պիտի բերուի .

Մինչև օրս ուշացուելուն պատճառայն էր որ ֆրանսական կառավարութիւնը յանցաւորներու անձնատուութեան օրինաց համաձայնիքանի մը պահանջներ գրած էր պուլկար կառավարութեան առջև .

— Բարիլի թերթերը կը հազորդեն որ իշխանը Փարիզէն արդէն մեկներ է .

— Ամբողջ մամուլը դժգոհ է որ գահական ճառին մէջ Մակեդոնիոյ մասին չէ յիշուած. ազգային ժողովին մէջ ալ ընդգրիմագիր կուսակցութիւնը այդ կէտը վիճարանութեան նիւթ շիներ է .